

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15**  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

21.12.2010թ.

Ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Սիրգոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ն. Աստվածատուրովա (Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Մ. Երիցյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ):

**Օրակարգի նախագծում՝ երեք հարց.**

1. «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրը հաստատելու մասին» հարցը:

*/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում 16.11-20.11.2009թ. տեղի ունեցած «Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) և Ֆինանսների գերազանցության կենտրոնի (Սլովենիա) կողմից կազմակերպված «Գրամական փոխանցումների վիճակագրություն» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Ա.Շաբոյան/*

2.2. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 30.11-02.12.2009թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ զբաղվածության գնահատում» թեմայով սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա.Շաբոյան/*

2.3. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում 23-25.11.2009թ.տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Միջին Ասիայի և այլ ԱՊՀ երկրների համար «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների և վիճակագրական տեղեկատվության տարածումը» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան, Ա. Մարտիրոսյան/*

2.4. Հաղորդում՝ Հունաստանի Աթենք քաղաքում 24-25.11.2009թ. տեղի ունեցած «ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքների վերլուծությանը վերաբերող աշխատանքային քննարկմանը» մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Ա.Առուշանյան/*

**3. Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրը հաստատելու մասին» հարցը:

*/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **Լսեցին՝**

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Նեպալի Կատմանդու քաղաքում 2010 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած «Երեխաների և չափահասների շրջանում հարկադիր աշխատանքի տարածվածության գնահատման մեթոդաբանական հարցեր» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Կ. Կոյումջյան/*

2.2. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 6-ից 8-ը տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Միգրացիայի վիճակագրության առկա իրավիճակն ու դրան առնչվող հիմնախնդիրները տեղեկատվություն տրամադրողների և սպառողների տեսանկյունից» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Ա. Թոխաթյան/*

2.3. Հաղորդում՝ Ռուսաստանի դաշնության Մոսկվա քաղաքում 2010 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը տեղի ունեցած 2011թ. համար միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ՀՆԱ 1993թ. դրույթներին համապատասխան ազգային դրամով ՀՆԱ-ի մասին տվյալների նախապատրաստման վերաբերյալ հարցերով ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Ն. Աստվածատուրովա/*

2.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 13-ից 18-ը տեղի ունեցած 2011 թվականի համար միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում երկկողմանի աշխատանքների իրականացման նպատակով «Մպառված ապրանք (ծառայություն) ներկայացուցիչների ընտրանքի և ցանկի ճշգրտում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան/*

## **Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ